# ՀԱԱՀ «ՁԱՐԹՈՆՔ» ՀԱՆԳՍՏՅԱՆ ՏԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՆՆԴԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/12-Ա-1

ք. Երևան «20» «հունվարի» 2018թ.

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը ի դեմս ռեկտոր Ա.Թարվերդյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Ա/Ձ Արմեն Եսայանը, որը գործում է օրենսդրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 4686100 (չորս միլիոն վեց հարյուր ութսունվեց հազար հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Պայմանագրի գնից՝ 20 %-ի չափով, Գնորդը փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի

վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**

Հայաստանի ազգային
ագրարային համալսարան
ք. Երևան,Տերյան 74
ՀՎՀՀ՝ 01507028
Հ/Հ՝247010053103
<<Արդշինբանկ>> ՓԲԸ

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

ԱՁ Արմեն Եսայան
ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Հրազդան
Սպանդարյան 36
ՀՎՀՀ՝ 40514356
Հ/Հ1930028862270100
Կոնվերսբանկ ՓԲԸ

/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 1*
*« » 2018թ. կնքված*
*ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/12-Ա-1 ծածկագրով պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| | | Ապրանքի | | | | | | | | ՀՀ դրամ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | մատակարարման | | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավոր-ը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը Սկսած հունիսի 20-ից |
| 1 | 15811100 | Հաց բարձր տեսակի | ՀՀ | Հրազդան, ցորենի 1-ին տեսակի ալյուրից պատրաստված, ՀՍ 31-99: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 % | կգ | 400 | 480000 | 1200 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնաձոր, Չարթոնք հանգստյան տուն | 1200 | ըստ պահանջի |
| 2 | 15531100 | Կարագ սերուցքային | Նոր Զելանդիա | Սերուցքային, յուղայնությունը՝71,5-82,5%, բարձր որակի, թարմ վիճակում, պրոտեինի պարունակությունը 0,7 գ, ածխաջուր 0,7 գ, 740 կկալ 200-250 գ կամ 20-25 կգ գործարանային փաթեթներով: Անվտանգությունը և մակնշումը՝ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և | կգ | 4400 | 660000 | 150 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնաձոր, Չարթոնք հանգստյան տուն | 150 | ըստ պահանջի |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված: | | | | | | | |
| 3 | 03142510 | Ձու | ՀՀ | Ձու սեղանի, 01 կարգի, պահպանման ժամկետը 25օր, սառնարանային պայմաններում՝ 120 օր, փաթեթավորված ծալքավոր ստվարաթղթե բջիջներով. Անվտանգությունը՝ Սան Պին 2.3.2.560-96. ՕՍՏ182-99 | հատ | 50 | 110000 | 2200 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Չարթոնք հանգստ-յան տուն | 2200 | ըստ պահանջի |
| 5 | 03142100 | Մեղր | ՀՀ | Բնական մեղր՝ ծաղկային կամ մեղրացողային, առանց մեխանիկական խառնուրդների և խմորման, ջրի զանգվածային բաժինը՝ 18,5 %-ից ոչ ավելի, սախարոզի զանգվածային մասը (ըստ բացարձակ չոր նյութի)՝ 5,5%-ից ոչ ավելի, ՀՍՏ 228-2003, փաթեթավորումը՝ ՀՍՏ 228-2003: Անվտանգությունը և մակնշումը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 80 % | կգ | 3000 | 90000 | 30 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Չարթոնք հանգստ-յան տուն | 30 | ըստ պահանջի |
| 6 | 15131100 | Նրբերշիկ | Բրազիլիա | Բաղադրությունը՝ հավ. ջուր, ցորենի ալյուր, մոդիֆիկացված եգիպտացորենի օսլա, հավի ճարպ, աղ, համեմունքներ, եգիպտացորենի օշարակ, սոյայի սպիտակուց, սոխի, սխտորի փոշի, [illegible] | կգ | 1200 | 48000 | 40 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Չարթոնք հանգստ-յան տուն | 40 | ըստ պահանջի |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ֆոսֆատ, խոզի ծխեցրած փափկամիս: Վակումային փաթեթավորմամբ: Կանադական արտադրության կամ համարժեքը: | | | | | | | |
| 7 | 15872400 | Աղ մանր | ՀՀ | Կերակրի աղ՝ բարձր տեսակի, յոդացված ՀՍՏ 239-2005 Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս: | կգ | 160 | 2400 | 15 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Չարթոնք հանգստ-յան տուն | 15 | ըստ պահանջի |
| 8 | 15871256 | Աղացած սև բիբար | ՀՀ | Համեմունք աղացած: Ընտիր կամ սովորական տեսակի: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված "Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | կգ | 3500 | 31500 | 9 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Չարթոնք հանգստ-յան տուն | 9 | ըստ պահանջի |
| 9 | 15871256 | Աղացած կարմիր բիբար | ՀՀ | Համեմունք աղացած: Ընտիր կամ սովորական տեսակի: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված "Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" | կգ | 3000 | 12000 | 4 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Չարթոնք հանգստ-յան տուն | 4 | ըստ պահանջի |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 10 | 15871256 | Սև բիբար հատիկավոր | ՀՀ | Համեմունք հատիկավոր: Ընտիր կամ սովորական տեսակի: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված "Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | կգ | 7000 | 14000 | 2 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Չարթոնք հանգստ-յան տուն | 2 | ըստ պահանջի |
| 11 | 15612160 | Այյուր բարձր տեսակի | ՌԴ | Ցորենի ալյուրին բնորոշ, առանց կողմնակի համի և հոտի: Առանց թթվության և դառնության, առանց փտահոտի ու բորբոսի: Խոնավության զանգվածային մասը՝ ոչ ավելի 15 %-ից, մետաղամագնիսական խառնուրդները՝ ոչ ավելի 3,0%-ից, մոխրի զանգվածային մասը՝ չոր նյութի 0.75%, հում սոսնձանյութի քանակությունը՝ առնվազն 30,0%: ՀՍՏ 280-2007: Անվտանգությունը և մակնշումը N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | 220 | 17600 | 80 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Չարթոնք հանգստ-յան տուն | 80 | ըստ պահանջի |
| 12 | 15831000 | Շաքարավազ | ՀՀ | Սպիտակ գույնի, սորուն, քաղցր, առանց կողմնակի համի և հոտի/ինչպես չոր վիճակում այնպես էլ լուծույթում/: Շաքարի լուծույթըպետք է լինի | կգ | 350 | 38500 | 110 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Չարթոնք հանգստ- | 110 | ըստ պահանջի |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | թափանցիկ, առանց լուծված և կողմնակի խառնուրդների, սախարոզի զանգվածային մասը՝99.75%-ից ոչ պակաս /չոր նյութի վրա հաշված/ | | | | | յան տուն | | |
| 13 | 15321000 | Հյութ բնական | ՌԴ | Մրգահյութեր՝ պատրաստված թարմ խնձորի, բալի, ծիրանի, դեղձի պտուղներից, պտղամիս-նեկտարով շաքարի օշարակի հավելումով կամ առանց դրա, չափածրարված 1լ ստվարաթղթե սպառողական տարաներով, պաստերացված: Անվտանգությունը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | լիտր | 300 | 99000 | 330 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Ձարթոնք հանգըստ-յան տուն | 330 | ըստ պահա |
| 14 | 15331184 | Ձեյթուն սև | ՀՀ | Ձեյթու սև, միջին չափսի, կորիզով: | կգ | 1700 | 68000 | 40 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Ձարթոնք հանգըստ-յան տուն | 40 | ըստ պահանջ |
| 15 | 15863200 | Թեյ (մեկանգամյա) | ՌԴ | Թեյ սև չափածրարված և առանց, խոշոր տերևներով, հատիկավորված և մանր: Միանգամյաօգտագործման թեյի տոպրակները տեսակավորված են 2, 2,5 և 3 գ փաթեթներով: "Փունջ", բարձրորակ և I տեսակների, ԳՕՍՏ 1937-90 կամ ԳՕՍՏ1938-90: Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | կգ | 9000 | 45000 | 5 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Ձարթոնք հանգըստ-յան տուն | 5 | ըստ պահանջի |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 16 | 15421100 | Ձեթ | ՌԴ | Պատրաստված արևածաղկի սերմերի լուծամզման և ճզման եղանակով, բարձր տեսակի, զտված, հոտազերծված, ԳՕՍՏ 1129-93: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | լիտր | 600 | 54000 | 90 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Չարթոնք հանգըստ-յան տուն | 90 | ըստ պահանջի |
| 17 | 15412100 | Յուղ հալած | Բելգիա | Բարձր որակի,թարմ վիճակում:Անվտանգություն ը՝ ըստ N 2-III-4,9-01-2010 հիգիենիկ նորմատիվների <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | 1800 | 99000 | 55 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Չարթոնք հանգըստ-յան տուն | 55 | ըստ պահանջի |
| 18 | 15331153 | Ոսպ | ՌԴ | Համասեռ, մաքուր, չոր՝ խոնավությունը՝ (14,0-17,0) % ոչ ավելի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | 500 | 12500 | 25 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Չարթոնք հանգըստ-յան տուն | 25 | ըստ պահանջի |
| 19 | 15614200 | Բրինձ | Թայլանդ | Սպիտակ, խոշոր, բարձր, երկար տեսակի, չկոտրած, լայնությունից բաժանվում են 1-ից մինչև 4 տիպերի, ըստ տիպերի խոնավությունը 13%-ից մինչև 15%, ԳՕՍՏ 6293-90: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառ. 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված , Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական | կգ | 500 | 50000 | 100 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Չարթոնք հանգըստ-յան տուն | 100 | ըստ պահանջի |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | | | | | | | |
| 20 | 0322117 | Գառոխ դեղին | ՌԴ | Չորացրած, կեղևած, դեղին կամ կանաչ գույնի: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | 320 | 12800 | 40 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնաձոր, Չարթոնք հանգստյան տուն | 40 | ըստ պահանջ |
| 21 | 15331152 | Սիսեռ | ՌԴ | Սիսեռ ԳՕՍՏ 8758-76, համասեռ, մաքուր, չոր խոնավությունը՝ (14,0-20,0) % ոչ ավելի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | 1000 | 30000 | 30 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնաձոր, Չարթոնք հանգստյան տուն | 30 | ըստ պահանջի |
| 22 | 15851100 | Սպագետի | ՀՀ | Մակարոնեղեն անդրոժ խմորից, կախված ալյուրի տեսակից և որակից՝ A (պինդ ցորենի ալյուրից), Б (փափուկ ապակենման ցորենի ալյուրից), B (հացաթխման ցորենի ալյուրից), չափածրարված և առանց չափածրարման, ԳՕՍՏ 875-92 կամ համարժեք: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | 300 | 6000 | 20 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնաձոր, Չարթոնք հանգստյան տուն | 20 | ըստ պահանջի |
| 23 | | Մակարոն | ՀՀ | | կգ | 280 | 8400 | 30 | | 30 | ըստ պահանջի |
| 24 | | Վերմիշել | ՀՀ | | կգ | 280 | 8400 | 30 | | 30 | ըստ պահանջի |
| 25 | 15619000 | Հաճար | ՀՀ | Ստացված հաճարի հատիկներից, հատիկներով խոնավությունը 15 %-ից ոչ ավելի, փաթեթավորումը՝ 50կգ ոչ ավելի պարկերով: Անվտանգությունը և | կգ | 500 | 35000 | 70 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնաձոր, Չարթոնք հանգստ- | 70 | ըստ պահանջի |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված «Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | | | | | յան տուն | | |
| 26 | 15331151 | Լոբի հատիկավոր | ՀՀ | Լոբի գունավոր, միագույն, գունավոր ցայտուն, չոր՝ խոնավությունը 15 %-ից ոչ ավելի կամ միջին չորությամբ՝ (15,1-18,0) %: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս 50 % | կգ | 1000 | 55000 | 55 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Չարթոնք հանգըստ-յան տուն | 55 | ըստ պահանջի |
| 27 | 15617000 | Սպիտակ ծավար | ՀՀ | Ստացված ցորենի թեփահան հատիկների հղկմամբ, կամ հետագա կոտրատմամբ, ցորենի հատիկները լինում են հղկված ծայրերով կամ հղկված կլոր հատիկների ձևով, խոնավությունը 14%-ից ոչ ավելի, աղբային խառնուկները 0,3%-ից ոչ ավելի, պատրաստ-ված բարձր և առաջին տեսակի ցորենից, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն | կգ | 300 | 12000 | 40 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Չարթոնք հանգըստ-յան տուն | 40 | ըստ պահանջի |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | որոշմամբ հաստատված,"Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և"Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | | | | | | | |
| 28 | 15616000 | Հնդկաձավար | ՌԴ | Հնդկաձավար I կամ II տեսակների, խոնավությունը՝ 14,0 %-ից ոչ ավելի, հատիկները՝ 97,5 %-ից ոչ պակաս: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված "Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 70 %: | կգ | 320 | 22400 | 70 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Չարթոնք հանգըստ-յան տուն | 70 | ըստ պահա |
| 29 | 15111120 | Միս տավարի | ՀՀ | Միս տավարի տեղական, սպանդանոցային ծագման, պաղեցրած, փափուկ միս առանց ոսկորի, զարգացած մկաններով, պահված 0 oC -ից մինչև 4 oC ջերմաստիճանի պայմաններում՝ 6 ժ-ից ոչ ավելի, I պարարտության, պաղեցրած մսի մակերեսը չպետք է լինի խոնավ, | կգ | 2900 | 1305000 | 450 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Չարթոնք հանգըստ-յան տուն | 450 | ըստ պահա |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ոսկորի և մսի հարաբերակցությունը՝ համապատասխանաբար 0 % և 100 %: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | | | | | | | |
| 30 | 15113200 | Միս խոզի | ՀՀ | Պաղեցրած վիճակում, ոսկորի և մսի հարաբերակցությունը՝ համապատասխանաբար 50-50 %, մսեղիք: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված "Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | 2900 | 116000 | 40 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Չարթոնք հանգըստ-յան տուն | 40 | ըստ պահանջի |
| 31 | 15112180 | Միս հավի | ՀՀ | Հավի միս տեղական, պաղեցրած առանց փորոտիքի, մաքուր, արյունազրկված, առանց կողմնակի հոտերի, փաթեթավորված պոլիէթիլենային թաղանթներով, ԳՕՍՏ 25391-82: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված | կգ | 1100 | 275000 | 250 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Չարթոնք հանգըստ-յան տուն | 250 | ըստ պահանջի |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | "Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | | | | | | | |
| 33 | 15871100 | Քացախ | ՀՀ | Քացախ խնձորի, պատրաստված թարմ խնձորից, թոլյատրվող թթուների զանգվածային մասը՝ 4,0 %, մնացորդային սպիրտի ծավալը 0,3 %: Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝«Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | լիտր | 200 | 600 | 3 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Չարթոնք հանգրստ-յան տուն | 3 | ըստ պահանջ |
| 34 | 15872310 | Դափնու տերև | ՀՀ | Չորացրած դափնետերևներ, խոնավության զանգվածային մասը տերևում՝ 12 %-ից ոչ ավելի, ԳՕՍՏ 17594-81: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | 1000 | 1500 | 1.5 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Չարթոնք հանգրստ-յան տուն | 1.5 | ըստ պահանջ |
| 35 | 15842110 | Կոնֆետ /շոկոլադ | Ուկրաինա | Ըստ սահմանված բնութագրի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | կգ | 2100 | 126000 | 60 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Չարթոնք հանգրստ-յան տուն | 60 | ըստ պահանջ |
| 37 | 15331180 | Գառոխ կանաչ (բանկա) | Հունգարիա | Պահածոյացված, կանաչ գույնի, հատիկները կանաչ աղիությունը՝ միջին, 1 կգ-անոց տարրաներով: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և | կգ | 1100 | 38500 | 35 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Չարթոնք հանգրստ-յան տուն | 35 | ըստ պահանջ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | «Սննդամթերքի անվտանգության մասինե ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | | | | | | | |
| 38 | 03221123 | Սունկ (բանկա) | Հունգարիա | Պահածոյացված, հատիկները ամբողջական աղիությունը՝ միջին, 1 կգ-անոց տարրաներով: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասինե ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | 1600 | 104000 | 65 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Չարթոնք հանգըստ-յան տուն | 65 | ըստ պահանջի |
| 39 | 15511600 | Խտացրած կաթ | Ուկրաինա | Խտացրած կաթ շաքարով, խոնավությունը՝ 26,5 %-ից ոչ ավելի, սախարոզը 43,5 %-ից ոչ պակաս, կաթնային չոր նյութերի զանգվածային մասը՝ 28,5 %-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 48 0T-ից, ոչ ավելի, պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 70 %: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | 1200 | 6000 | 5 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Չարթոնք հանգըստ-յան տուն | 5 | ըստ պահանջի |
| 40 | 15331185 | Եգիպտացորեն (բանկա) | Հունգարիա | Պահածոյացված, դեղին գույնի, հատիկները դեղին, քաղցր, 1 կգ-անոց տարրաներով: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և | կգ | 1100 | 16500 | 15 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Չարթոնք հանգըստ-յան տուն | 15 | ըստ պահանջի |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | անվտանգության մասինե << օրենքի 8-րդ հոդվածի: | | | | | | | |
| 41 | 15894800 | Կոաբ | ՌԴ | Կոաբի ձողիկներ, վակումային փաթեթավորմամբ: | կգ | 1500 | 15000 | 10 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնաձոր, Ջարթոնք հանգըստյան տուն | 10 | ըստ պահանջ |
| 42 | 15311100 | Կարտոֆիլ | << | 1-ին տեսակի, չցրտահարված, առանց վնասվածքների, նեղ մասի տրամագիծը 4սմից ոչ պակաս, տեսականու մաքրությունը՝ 90%-ից ոչ պակաս, ԳՕՍՏ26545-5, փաթեթավորումը կտորի, ցանցի կամ պոլիմերային պարկերով: Անվտանգությունը՝ ըստ << կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված, Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի և Սննդամթերքի անվտանգության մասին << օրենքի 8-րդ հոդվածի | կգ | 200 | 60000 | 300 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնաձոր, Ջարթոնք հանգըստյան տուն | 300 | ըստ պահանջ |
| 43 | 15331161 | Սոխ գլուխ | << | Թարմ, կծու, կիսակծու կամ քաղցր, ընտիր տեսակի, նեղ մասի տրամագիծը 3 սմ-ից ոչ պակաս, ԳՕՍՏ 27166-86, անվտանգությունը՝ ըստ << կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված, Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի և Սննդամթերքի անվտանգության մասին << | կգ | 300 | 39000 | 130 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնաձոր, Ջարթոնք հանգըստյան տուն | 130 | ըստ պահանջ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | օրենքի 8-րդ հոդվածի | | | | | | | |
| 44 | 15331168 | Սմբուկ | << | Թարմբոստանային,էկոլոգի ապես մաքուր: Անվտանգությունը՝ ըստ << կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված, Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի և Սննդամթերքի անվտանգության մասին << օրենքի 8-րդ հոդվածի | կգ | 250 | 17500 | 70 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Չարթոնք հանգըստ-յան տուն | 70 | ըստ պահանջի |
| 45 | 15331139 | Լոլիկ | << | Թարմբոստանային,էկոլոգի ապեսմաքուր:Անվտանգությունը՝ ըստ << կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված, Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի և Սննդամթերքի անվտանգության մասին << օրենքի 8-րդ հոդվածի | կգ | 300 | 75000 | 250 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Չարթոնք հանգըստ-յան տուն | 250 | ըստ պահանջի |
| 46 | 03221410 | Կաղամբ | << | Գլուխ կաղամբ-վաղահաս, միջահաս և ուշահաս սովորական տեսակների, ԳՕՍՏ2676885: Անվտանգությունը՝ ըստ << կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված, Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի և Սննդամթերքի անվտանգության մասին << օրենքի 8-րդ հոդվածի | կգ | 200 | 36000 | 180 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Չարթոնք հանգըստ-յան տուն | 180 | ըստ պահանջի |
| 47 | 03221100 | Բազուկ | << | Արտաքին տեսքը՝ արմատապտուղները թարմ, ամբողջական, առանց | կգ | 250 | 12500 | 50 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա- | 50 | ըստ պահանջի |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | hիվանդությունների, չոր, չկեղտոտված, առանց ճաքերի և վնասվածքների: Ներքին կառուցվածքը՝ միջուկը հյութալի, մուգ կարմիր՝ տարբեր երանգների: Արմատապտուղների չափսերը (ամենամեծ լայնակի տրամագծով) 5-14սմ: Թույլատրվում է շեղումներ նշված չափսերից և մեխանիկական վնասվածքներով 3 մմ ավել խորությամբ՝ ընդհանուր քանակի 5%-ից ոչ ավելի: Արմատապտուղներին կպած հողի քանակությունը ոչ ավել քան ընդհանուր քանակի 1% | | | | | ձոր, Ջարթոնք հանգստյան տուն | | |
| 48 | 03221110 | Գազար | ՀՀ | Բոստանային, էկոլոգիապես մաքուր,թարմ: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված, Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի և Սննդամթերքի անվտանգության մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | կգ | 250 | 20000 | 80 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնաձոր, Ջարթոնք հանգստյան տուն | 80 | ըստ պահանջի |
| 49 | 03221124 | Վարունգ | ՀՀ | Թարմ բոստանային, էկոլոգիապես մաքուր: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված, Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի և Սննդամթերքի | կգ | 400 | 24000 | 60 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնաձոր, Ջարթոնք հանգստյան տուն | 60 | ըստ պահանջի |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | անվտանգության մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | | | | | | | |
| 50 | 15331167 | Կանաչի խառը | ՀՀ | Բոստանային, էկոլոգիապես մաքուր,թարմ: | կգ | 2000 | 160000 | 80 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Ձարթոնք հանգըստ-յան տուն | 80 | ըստ պահանջի |
| 51 | 03222128 | Խնձոր | ՀՀ | Խնձոր թարմ, ԳՕՍՏ 21122-75, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված "Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի"և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | կգ | 250 | 12500 | 50 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Ձարթոնք հանգըստ-յան տուն | 50 | ըստ պահանջի |
| 52 | 03222131 | Ծիրան | ՀՀ | Ծիրան թարմ, ԳՕՍՏ 21122-75, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված "Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի"և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | կգ | 250 | 12500 | 50 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Ձարթոնք հանգըստ-յան տուն | 50 | ըստ պահանջի |
| 53 | 03222132 | Դեղձ | ՀՀ | Դեղձ թարմ, ԳՕՍՏ 21122-75, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված "Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի"և | կգ | 250 | 12500 | 50 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Ձարթոնք հանգըստ-յան տուն | 50 | ըստ պահանջի |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | | | | | | | |
| 54 | 03222139 | Ձմերուկ | ՀՀ | Ձմերուկ թարմ, ԳՕՍՏ 21122-75, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված "Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի"և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | կգ | 100 | 3000 | 30 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Չարթոնք հանգստ-յան տուն | 30 | ըստ պահա |
| 55 | 03222135 | Խաղող | ՀՀ | Խաղող թարմ, ԳՕՍՏ 21122-75, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված "Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի"և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | կգ | 400 | 8000 | 20 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Չարթոնք հանգստ-յան տուն | 20 | ըստ պահա |
| 56 | 15331131 | Լոբի կանաչ | ՀՀ | Ընտիր կամ սովորական տեսակի: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | կգ | 300 | 18000 | 60 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Չարթոնք հանգստ-յան տուն | 60 | ըստ պահա |
| 57 | 15872600 | Սոդա | ՌԴ | Նատրիում | կգ | 1000 | 2000 | 2 | Կոտայքի | 2 | ըստ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | երկածխաջրածնային: **Քաշը՝ 500գ** | | | | | մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Ջարթոնք հանգըստ-յան տուն | | պահանջի |
| 58 | 15623200 | Սպիտակաձա-վար (մանի կրուպա) | ՀՀ | Պատրաստված կոշտ և փափուկ ցորենից, ԳՕՍՏ 7022-97: Անվտանգությունը և մակնշումը՝ N 2-III- 4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված, «Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | 1000 | 30000 | 30 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Ջարթոնք հանգըստ-յան տուն | 30 | ըստ պահանջի |
| 59 | 15331165 | Սխտոր | ՀՀ | Սովորական տեսակի, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված "Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի"և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | 2000 | 6000 | 3 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Ջարթոնք հանգըստ-յան տուն | 3 | ըստ պահանջի |
| 60 | 15331136 | Բիբար կանաչ | ՀՀ | Կանաչ բիբար, թարմ օգտագործման տեսակի, անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված "Թարմ պտուղ- | կգ | 300v | 12000 | 40 | Կոտայքի մարզ, գյուղ Աղավնա-ձոր, Ջարթոնք հանգըստ-յան տուն | 40 | ըստ պահանջի |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի”և “Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | | | | | | | |

**ԳՆՈՐԴ**

Հայաստանի ազգային
ագրարային համալսարան
Ք.Երևան, Տերյան 74
ՀՎՀՀ՝ 01507028
Հ/Հ՝ 247010053103
<<Արդշինբանկ>> ՓԲԸ

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

ԱՁ Արմեն Եսայան
ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Հրազդան
Սպանդարյան 36
ՀՎՀՀ՝ 40514356
Հ/Հ1930028862270100
Կոնվերսբանկ ՓԲԸ

/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 2*
*« » 2018թ. կնքված*
*ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/12-Ա-1 ծածկագրով պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 15811100 | Հաց բարձր տեսակի | - | - | - | - | - | Կանխավճարը սպառելուց հետո փաստացի մատակարարած ապրանքի դիմաց վճարումը կատարվելու է 5 բանկային օրվա ընթացքում | | | | - | - | Փաստացի մատակա-րարած ապրանքի դիմաց վճարումը կատարվե-լու է 5 բանկային օրվա ընթացքում | 100% |
| 2 | 15531100 | Կարագ սերուցքային | - | - | - | - | - | | | | | - | - | | 100% |
| 3 | 03142520 | Ձու | - | - | - | - | - | | | | | - | - | | 100% |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5 | 03142100 | Մեղր | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 6 | 15131100 | Նրբերշիկ | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 7 | 15872400 | Աղ մանր | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 8 | 15871256 | Աղացած սև բիբար | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 9 | 15871256 | Աղացած կարմիր բիբար | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 10 | 15871256 | Սև բիբար հատիկավոր | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 11 | 15612160 | Ալյուր բարձր տեսակի | - | - | - | - | - | | - | - | | 100% |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 12 | 15831000 | Շաքարավազ | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 13 | 15321000 | Հյութ բնական | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 14 | 15331184 | Ձեյթուն սև | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 15 | 15863200 | Թեյ (մեկանգամ-յա) | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 16 | 15421100 | Ձեթ | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 17 | 15412100 | Յուղ հալած | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 18 | 15331153 | Ոսպ | - | - | - | - | - | | - | - | | 100% |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 19 | 15614200 | Բրինձ | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 20 | 0322117 | Գառոխ դեղին | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 21 | 15331152 | Սիսեռ | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 22 | | Սպագետի | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 23 | 15851100 | Մակարոն | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 24 | | Վերմիշել | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 25 | 15619000 | Հաճար | - | - | - | - | - | | - | - | | 100% |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 26 | 15331151 | Լոբի հատիկավոր | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 27 | 15617000 | Սպիտակ ձավար | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 28 | 15616000 | Հնդկաձավար | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 29 | 15111120 | Միս տավարի | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 30 | 15113200 | Միս խոզի | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 31 | 15112180 | Միս հավի | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 33 | 15871100 | Քացախ | - | - | - | - | - | | - | - | | 100% |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 34 | 15872310 | Դափնու տերև | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 35 | 15842110 | Կոնֆետ/շոկոլադ | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 37 | 15331180 | Գառոխ կանաչ (բանկա) | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 38 | 03221123 | Սունկ (բանկա) | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 39 | 15511600 | Խտացրած կաթ | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 40 | 15331185 | Եգիպտացորեն (բանկա) | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 41 | 15894800 | Կռաբ | - | - | - | - | - | | - | - | | 100% |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 42 | 15311100 | Կարտոֆիլ | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 43 | 15331161 | Սոխ գլուխ | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 44 | 15331168 | Սմբուկ | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 45 | 15331139 | Լոլիկ | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 46 | 03221410 | Կաղամբ | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 47 | 03221100 | Բազուկ | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 48 | 03221110 | Գազար | - | - | - | - | - | | - | - | | 100% |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 49 | 03221124 | Վարունգ | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 50 | 15331167 | Կանաչի խառը | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 51 | 03222128 | Խնձոր | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 52 | 03222131 | Ծիրան | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 53 | 03222132 | Դեղձ | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 54 | 03222139 | Ձմերուկ | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 55 | 03222135 | Խաղող | - | - | - | - | - | | - | - | | 100% |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 56 | 15331131 | Լոբի կանաչ | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 57 | 15872600 | Սոդա | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 58 | 15623200 | Սպիտակաձա-վար (մանի կրուպա) | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 59 | 15331165 | Սխտոր | - | - | - | - | - | | - | - | | 100% |
| 60 | 15331136 | Բիբար կանաչ | - | - | - | - | - | | - | - | | 100% |

**ԳՆՈՐԴ**

Հայաստանի ազգային
ագրարային համալսարան
ք.Երևան, Տերյան 74
ՀՎՀՀ՝ 01507028
Հ/Հ՝ 247010053103
<<Արդշինբանկ>> ՓԲԸ

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

ԱՁ Արմեն Եսայան
ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Հրազդան
Սպանդարյան 36
ՀՎՀՀ՝ 40514356
Հ/Հ1930028862270100
Կոնվերսբանկ ՓԲԸ

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ